

Բայց միւս կողմանէ փոտ վախճալ սկսաւ 'ի Հոռոմայ: Արշաւիբ պատրիկն՝ կայսեր մօրեգրայրն, Ամիրխանն¹ (Ամիրխա) և փռնէի եպիսկոպոսներն, և ուրիշ երկու եպիսկոպոսունք, Հոռոմ գրկուեցան հակապատրիարքին և կայսեր կողմանէ ընծայեալք և թղթովք, որք շատ խոնարհաբար գրուած էին, ուստ պատճառս գնելով ի վնաստիոսի աթոռընկէցութեան և անոր յամրոգին ընտրութեանը: Այն ժամանակ սրբոյն Պետրոսի յամրոգն էր Ս. Նիկողայոս Ա. Մեծն անուանեալ, որ նշանաւոր քահանայապետաց մին եղած է. չուզեց որոշում մը տալ ճիշտ տեղեկութիւն չառած, և զանգատ ալ բրաւ՝ որ առանց իրեն հարցընելու ինչնատիոսը աթոռընկէց ըրեր էին, և աեղը պարզ աշխարհական մը պատրիարքութեան աստիճանին բարձրացուցեր էին: Երկու նուիրակ խաւքեց ի կ. Պոլիս, Զաքարիա և Հոռոբայր, ապսպրելով ասոնց որ լաւ տեղեկացընեն զինքը: Ասոնք այն-

պիսի ընդունելութիւն մը ունեցան, որ ինչպանդին միայն գիտէր ընելն: Կէս ճամբուն ընծաներ գրկուեցան. ետքը տեսնելով որ նուիրակը չէին վաստակուիր, սկսան զանոնք վախցընել. կ. Պոլիս հասածուն պէս իսկոյն պալատի մը մէջ փակեցին, խիստ հակողութեան ներքե, որպէս զի յկարենան պէտք եղած քննութիւնքն կատարել, վերջն ալ խիստ սպառնալիք սկսան ընել: Ուրիշ միայն նուիրակը զիմացան. վերջապէս զիջան, և փոսի ընտրութիւնը վաւեր համոզուած հրատարակեցին: Շուտ մը փոտ նոր ժողով մը գումարեց, որ իրեն յափշտակութիւնը վերջնական եղանակաւ պիտի ապահովընէր: Ինչնատիոս Մելիտինէն էր դարձեալ Տերբեքնութիւն կղզեակը բերել սուրին, որպէս զի իր դատաւորաց տրամադրութեան տակ գտնուի: Այս անգամ անոր պահապան զրին զՆիկեոսոս Որիփառ, կայսերական նաւատորմըին հրամանատարն, որ կայսեր և փոսի հաճելի ըլլալու համար, իր նախորդքն անցընելով՝ հազար ու մէկ տանջանք տուաւ խեղճին:

Շարայարելի

1. Փոփոքից քաղաք մ'էր 'ի Փոքր Ասիա, Սանկարբոս (Սաքարիա) գետոյն արեւմտեան կողմն:

ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԵՈՑ

Ի ներկայիս, ի բաց առեալ Թուրքիա, Բուլղարիա, Սերբիա և Յունաստան, Եւրոպիոյ բոլոր տէրութեանց մէջ վիճակագրութիւնք կը կատարուին ամենայն ճշգրտութամբ, և այս պատճառաւ յօգուածիս մէջ նշանակուած թիւք, որք առնուած են իւրաքանչիւր տէրութեանց պաշտօնական վիճակագրութիւններէ՝ կրնան համարուիլ ճշգրտելիք:

Եւրոպա 1885ին ունէր 337,527,700 բնակիչ, 1895ին նոցա թիւն եղաւ 367,449,500. որ է ըսել՝ 29,921,800 աւելի քան տասը տարի առաջ, յորմէ կը հետեի թէ բազմամարդութեան ամեն տարւոյ միջին առաւելութիւնն եղած է 0.88%:

Ամենէն աւելի ժողովուրդ բազմացող եր-

կիրներն են. Ռուսիա՝ որ տասը տարուան մէջ ունեցաւ 12,510,000 բնակչաց առաւելութիւն. Գերմանիա ունեցաւ 4,522,600 բնակիչ աւելի. Աւստրիա-Հունգարիա տասը տարուան մէջ ունեցաւ 3,502,200 բնակիչ աւելի. Մեծն Բրիտանիա նոյնչափ տարուան մէջ՝ 2,452,400 բն. աւելի ունեցաւ. Իտալիոյ տասնամեայ բնակչաց առաւելութիւնն է 1,552,300. Թուրքիոյ բնակիչք ևս աւելցան 1,100,000-ի չափ, և վերջապէս Գաղղիոյ բնակչաց հնգետասնամեայ առաւելութիւնն է միայն 671,100. և կը կարծուի թէ հընգետասնամեայ վիճակագրութեան ժամանակ, որ պիտի կատարուի տարւոյս մէջ, դեռ աւելի նուազ առաւելութիւն պիտի ունենայ:

Աւելցնենք նաև թէ Գաղղիոյ ժողովրդեան թիւը տարուէ տարի նուազելու հետ է, և այս պատճառաւ՝ մինչ 1885ին բազմամարդու թեան նկատմամբ Եւրոպիոյ տէրութեանց մէջ չորրորդ տեղին կը գրաւէր, այժմ՝ խոնարհեր է, իւր տեղը տալով Անգլիոյ և ինքն գրաւելով նորա տեղը՝ որ էր հինգերորդը:

Այժմ դենք կարգաւ Եւրոպիոյ տէրութեանց բնակչաց թիւերը, ըստ կարգի բազմամարդութեան իւրաքանչիւր աշխարհաց. Ռուսիա (բն. 97,807,300), Գերմանիա (բն. 51,478,300), Աւստրիա-Հունգարիա (բն. 41,384,900), Մեծն Բրիտանիա (բն. 39,134,100), Գաղղիա (բն. 38,343,100), Իտալիա (բն. 30,913,300), Սլաւիա (բն. 17,560,300), Բելգիա (բն. 6,341,900), Փուրբիա (բն. 5,600,000) Պորտուգալ (բն. 5,102,200) Ռումանիա (բն. 5,038,300), Շուէդ (բն. 4,873,100), Ստորին Նաւանգը (բն. 4,795,600), Բուլղարիա (բն. 3,309,800), Զուիցերի (բն. 2,917,700), Ֆինլանդիա (բն. 2,380,100), Սերբիա (բն. 2,283,400), Բոսնաստան (բն. 2,187,200), Դանիմարկա (բն. 2,172,300), Նորուեգիա (բն. 1,988,600), Լուքսեմբուրգ (բն. 211,

000) և այլ զանազուն փոքր տէրութեանց բնակիչք, որք մերձաւորապէս կը լինին 1,726,000:

Այս թուոց մէջ կը բովանդակուին միայն բուն Եւրոպիոյ մէջ գտնուող բնակիչք, ի բաց թողւած են Գաղթականութիւնք այլ և այլ տէրութեանց. նմանապէս Ռուսիոյ ու թուրքիոյ ափական զաւառաց բնակիչք:

Ամբողջընենք այս վիճակագրութիւն աւելցնելով 1895 տարւոյ մէջ նշանակուած Եւրոպիոյ տէրութեանց 22 մայրաքաղաքաց բնակչաց թիւերը:

Լոնդրա (առանց արուարձանաց) 4,349,166. Պարիս 2,447,957. Բեռլին 1,579,244. Վիեննա 1,364,548. Պետրբուրգ 1,035,439. Կ.Պոլիս 873,565. Մադրիդ 470,287. Հռոմ 451,000. Կոպէնհագ 375,759. Լիսթոնա 307,661. Ստոկհոլմ 264,585. Բուքրէշ 196,372. Բրիսէլ 187,929. Լա Հայ 180,454. Քրիստանիա 151,239. Աթէնք 107,846. Հելսինգֆոր (Ֆինլանդիա) 69,025. Բելգրադ 54,249. Բեռնա 48,328. Սոֆիա 47,000. Լուքսեմբուրգ 18,287. Զէտտինէ (Մոստէնէգրոյ) 1,400:

Համեմատութիւն կրօնից աշխարհիս հինգ մասանց մէջ

Կրօն	Եւրոպա	Ասիա	Ամերիկ	Աֆրիկ	Ովկիանիա	Աւսթրալիա
Կրիստոնէականք.	...	256. 000. 000	...	...	...	256. 000. 000
Կաթոլիկականք.	160. 465. 000	6. 000. 000	6. 000. 000	58. 000. 000	9. 119. 000	259. 284. 000
Բրահմայականք.	...	190. 000. 000	...	...	...	190. 000. 000
Մանդալականք.	6. 629. 000	109. 500. 000	56. 000. 000	...	24. 700. 000	176. 829. 000
Բուդդայականք.	...	147. 900. 000	...	...	...	147. 900. 000
Բողոքականք.	80. 112. 000	8. 400. 000	1. 400. 000	57. 000. 000	(?)	146. 912. 000
Տաքաւալաչոք.	...	...	97. 000. 000	...	4. 372. 000	101. 372. 000
Յուդայականք.	89. 196. 000	...	...	...	...	89. 196. 000
Տաոսեանք.	...	43. 000. 000	...	...	...	43. 000. 000
Միսմ.	...	14. 000. 000	...	...	...	14. 000. 000
Հրեայք.	6. 456. 000	200. 000	...	...	...	6. 656. 000
Անձնութք.	1. 219. 000	150. 000	...	1. 500. 000	...	2. 669. 600
Ամբողջ.	343. 777. 000	775. 150. 000	140. 400. 000	116. 500. 000	58. 191. 000	1. 415. 818. 000

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԿԱՅ

Տէրութեանց մէջ ամենէն աւելի բազմութիւն գործ ունեցողն է Ռուսիա. որոյ բանակի իսկական թիւն է խաղաղութեան ժամանակ 858,000 զինուոր: Յետոյ կու գայ Գաղղիա, 512,000. Գերմանիա ունի 380,000 զինուոր. ճինաստան եւ Իտալիա իւրաքանչիւր ունին 300,000. Անգլիա՝ 230,000. Չեռիցերի՝ 131,000. Սպանիա՝ 100,000. Բելգիա՝ 51,000. Միացեալ Նահանգք՝ խաղաղութեան ժամանակ՝ ունին 74,000 զինուոր, նոյնպէս եւ Ճապոն:

Խաղաղութեան ժամանակ Գերմանիա, Իտալիա եւ Աւստրիա ի միասին կը հանեն 1,192,000 զինուոր. եւ 7,700,000 պատերազմի ժամանակ, Ռուսիա եւ Գաղղիա միասին խաղաղութեան ժամանակ ունին 1,440,000 զինուոր, իսկ պատերազմի ժամանակ՝ 6,700,000 զինուոր:

Ահաւասիկ կը դնենք կարգաւ այլ եւ այլ տէրութեանց հետեւակցօրաց, այրուծիոյ եւ թնդանօթածիզ զօրաց թիւերը.

Ա. Հետեւակցօր: — 1. Ռուսիա, 490,000 զինուոր. 2. Գերմանիա, 335,000. 3. Գաղղիա, 330,000. 4. Աւստրիա—Հունգա-

րիա, 206,000. 5. Իտալիա, 128,000. 6. Անգլիա, 69,000. 7. Սպանիա, 51,000. 8. Ճապոն, 37,000. 9. Դանիմարկա, 30,000. 10. Բելգիա, 26,000:

Բ. Այրուծի: — 1. Ռուսիա, 109,000. 2. Գաղղիա, 77,000. 3. Գերմանիա, 65,000. 4. Աւստրիա—Հունգարիա, 64,000. 5. Իտալիա, 24,000. 7. Անգլիա, 13,000. 7. Սպանիա, 15,000. 8. Բելգիա, 5,600. 9. Դանիմարկա, 5,000. 10. Ճապոն, 1,100: — Գաղղիա եւ Ռուսիա ի միասին ունին Հաւասար այրուծի Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Իտալիոյ:

Գ. Թնդանօթածիզ: — Ռուսիա Համեմատարար Գաղղիայէն շատ նուազ թնդանօթ ունի. երկուքը միասին ունին 178,000 թնդանօթածիզ զինուոր. մինչդեռ Գերմանիա, Աւստրիա եւ Իտալիա ի միասին ունին 132,000: — 1. Ռուսիա, 98,000 թնդանօթածիզ. 2. Գաղղիա, 80,000. 3. Գերմանիա, 66,000. 4. Աւստրիա—Հունգարիա, 35,000. 5. Իտալիա, 31,000. 6. Անգլիա, 17,000. 7. Սպանիա, 10,000. 8. Բելգիա, 8,400. 9. Դանիմարկա, 9,000. 10. Ճապոն, 6,000:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Փառաւոր Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն	193
Հայկական տպագրութեան պատմութիւն՝ սկզբնաւորութենէն մինչ առ մեզ	200.
Յորդոր տառնական առ աւագանին Եղիսաբէթ քաղաքի վասն կանգնելոյ զպարատուն ի քաղաքի անդ	206
Ուղեւորութիւն Շանտրի յարեւելս	211
Մատենախօսական, Անանիա Շիրակացին եւ Արարատ թերթին յաւելումն	214
Ուղեւորութիւն յԻտալիա. — Վենետիկ	221
Սկզբնութիւն ԴԱՍԻՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ. — Հաւաքածոյ բանք նշանաւոր դատարակաց	226
Իշխանաց կղզիք	228
Բազմամարդութիւն Եւրոպոյ. — Համեմատութիւն կրօնից աշխարհիս հինգ մասանց մէջ. — Համեմատութիւն բանակաց	238

SOMMAIRE

Faustus de Byzance ou l'origine de l'église arménienne	193
L'histoire de l'imprimerie arménienne, du commencement jusqu'à nos jours	200
Discours prononcé devant le magistrat de la ville Elisabethopol pour la fondation d'un collège arménien dans la même ville	206
À travers l'Arménie russe	211
Bibliographique. — Ananie Sirakouni et le supplément de la revue « Ararat »	214
Voyage en Italie. — VENISE	221
PRINCIPES DE L'ÉDUCATION. — Extraits des ouvrages des célèbres éducateurs	226
Les îles des princes	228
La population de l'Europe. — Les religions comparées dans les cinq parties du monde. — Les armées comparées	238